Պետական կառույցների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթների պահպանումը՝ ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի 2016 թվականի տվյալների

Վանաձոր 2016

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մարդու իրավունքների պաշտպանությունը հնարավորինս արդյունավետ կերպով կազմակերպելու և իրականացնելու նպատակով տեղեկատվական բնույթի հարցումներ է ուղարկում պետական տարբեր կառուցներին, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին: Ստացված տեղեկատվությունն օգտագործվում է կազմակերպություն դիմած քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնման կամ նրանց իրավունքի իրականացմանն ուղղված իրավական խորհրդատվության շրջաններում: Այս տեսակետից շատ կարևոր է վերոհիշյալ կառույցների կողմից «Տեղեկատվության ազատության մասին»[1] օրենքով սահմանված պահանջների կատարումը՝ տեղեկատվության տրամադրումը օրենքով սահմանված ժամկետներում: Սույն ուսումնասիրությամբ ներկայացվում է նշված մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի կատարման վիճակագրությունը՝ ըստ կազմակերպության կողմից տեղեկատվական հարցումների և նրանց տրված պատասխանների:

Պետական կառույցներից, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ուղարկված պատասխաններն ըստ ստացված ժամկետների ամփոփ ներկայացված է **Հավելված** 1-**ում**

Ուսումնասիրման մեթոդաբանությունը

Պետական կառույցներին, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետների կատարման վերլուծության նպատակով կազմակեպությունը մշակել և կիրառում է հետևյալ մեթոդաբանությունը:
Հավաքագրված տեղեկատվությունը դասակարգվել է ըստ հետևյալ խմբերի:

Ժամանակին ստացված են համարվում տեղեկատվական հարցումների այն պատասխանները, որոնք կազմակերպությունը ստացել է հարցումն ուղարկելուց հետո 12-օրյա ժամկետում:

Կազմակերպության կողմից 12-օրը որպես ողջամիտ ժամանակահատված է համարվում՝ ելնելով «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի այն դրույթից, որ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, իսկ մնացած 7-օրերը դիտվում են որպես փոստային ծառայության համար նախատեսված ժամանակահատված:

Ուշացրած են համարվում օրենքով սահմանված, ինչպես նաև կազմակերպության կողմից ողջամիտ համարվող ժամկետների խախտմամբ ստացված պատասխանները:

---

http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1390

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Չպատասխանված են համարվում այն հարցումները, որոնց ընդհանրապես պատասխան չի տրվել:

Տեղեկատվության բազան ստեղծվում է հետևյալ գործընթացի արդյունքում. հարցումների պատասխանները ստացվելուն պես մուտքագրվում են ՀՔԱՎ հարցումների էլեկտրոնային բազայում, որտեղ նշվում է հարցումների պատասխանների հասցեատերը, ուղարկողը, ուղարկման ամսաթիվը, հարցումների պատասխանների էլեկտրոնային տարբերակը: Աղյուսակը հասանելի է միայն ՀՔԱՎ աշխատակազմին և պահպանվում է կազմակերպության կողմից անվտանգության կանոններին համապատասխան: Բազայի տվյալների հիման վրա, տարեկան կտրվածքով, կազմվում է կատարված հարցումների վիճակագրություն: Միայն 2016թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից պետական կառավարման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղարկվել են թվով 216 տեղեկատվական հարցումներ, որը 2015 թվականին ուղարկված հարցումներից պակաս է 27%-ով (2015 թվականին ուղարկվել է 294 տեղեկատվական հարցում):

Պատկեր 1-**ում** ներկայացված են կազմակերպության կողմից 2015 և 2016 թվականների ուղարկված տեղեկատվության հարցումներն ըստ բնագավառների.

Ինչպես երևում է պատկեր 1-ից, 2016 թ. կազմակերպության տեղեկատվական ընդհանուր հարցումների 10% և ավել բաժին ունեցող բնագավառներն են՝ սոցիալական և առողջապահական բնագավառը (18%) արդարադատության բնագավառը (15%), ՀՀ պաշտպանության նախարարությունը (14%): Նշված 3 բնագավառներին ուղղված տեղեկատվության հարցումները կազմում են ընդհանուր հարցումների 47%-ը: Դիտարկելով 2015 թ.-ի տվյալները, նկատում ենք, որ 2015 թ.-ին տեղեկատվական ընդհանուր հարցումների 10% և ավել բաժին ունեցող բնագավառները հինգն էին՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները (18%), սոցիալական և առողջապահական բնագավառը (15%), արդարադատության բնագավառը (13%), ՀՀ ոստիկանությունը և նրա ստորաբաժանումները (11%) և ՀՀ պաշտպանության նախարարությունը (10%): Նշված 5 բնագավառներին ուղղված տեղեկատվության հարցումները կազմել են ընդհանուր հարցումների 57%-ը: Այսպիսով, 2015 և 2016 թթ. տեղեկատվական հարցումների կառուցվածքում տեղի է ունեցել փոփոխություն. եթե 2015 թ. տեղեկատվական հարցումների մեծ մասը ուղղված են եղել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ապա 2016 թ. հիշյալ կառույցներին ուղարկվել են հարցումների ընդամենը 8 տոկոսը: Ստորև ներկայացվում է հարցումների պատասխանների վիճակագրությունը՝ ըստ բնագավառների և կառույցների:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ



ՊԱՏԿԵՐ 1

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Սոցիալական և առողջապահական բնագավառ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ. ուղարկված 216 տեղեկատվական հարցումներից 38-ը (17,6%) ուղղված են եղել սոցիալական և առողջապահական բնագավառին (2015թ. այն կազմել է 14.6%, 294 հարցումներից 43-ը): Ուղարկված հարցումներից 31-ի պատասխանները ստացվել են ժամանակին (81.6%), ուշացված են ստացվել 7-ի պատասխանները, ոչ մի գրություն անպատասխան չի մնացել: Նկատենք, որ 2015 թ. համեմատ սոցիալական և առողջապահական բնագավառից ուշացած պատասխանների տեսակարար կշիռը 2016 թ. փոքր-ինչ աճել է:

2015

- ժամանակին-34
- ուշացված-8
- չպատասխանված-1

2016

- ժամանակին-31
- ուշացված-7
- չպատասխանված-0



ՊԱՏԿԵՐ 2

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Արդարադատության բնագավառ

2016 թ. ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ուղարկված 216 տեղեկատվական հարցումներից 33-ը (15.3%) ուղղված են եղել արդարադատության բնագավառին: 2015 թ. այն կազմել է 12.9%՝ 294 հարցումներից 38-ը: 2016թ.-ն արդարադատության բնագավառից «ժամանակին ստացված» հարցումների պատասխանները եղել են 24-ը և կազմել են այդ բնագավառ ուղարկված գրությունների 72.7%: Ուշացած են պատասխանվել 7 գրություն, չպատասխանված են մնացել 2-ը: 2015 թ. «ժամանակին» պատասխանվել են 24 տեղեկատվական հարցումներ՝ ուղարկված հարցումների 63.16%:

2015

- ժամանակին-24
- ուշացված-12
- չպատասխանված-2

2016

- ժամանակին-24
- ուշացված-7
- չպատասխանված-2

Արդարադատության բնագավառի հարցումների պատասխանները



ՊԱՏԿԵՐ 3

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016թ. ուղարկված 216 տեղեկատվության հարցումներից 29-ը (13,5 %) ուղղված են եղել ՀՀ պաշտպանության նախարարությանը. (2015 թ. այն կազմել է 10.2%՝ 294 տեղեկատվական հարցումներից 30-ը): 2016 թ. ՀՀ պաշտպանության նախարարությունից «ժամանակին» են ստացվել ուղարկված 29 հարցումներից ընդամենը 5-ի (17%), ուշացված՝ 24 հարցումների պատասխանները: 2015 թ. ՀՀ պաշտպանության նախարարությունից «ժամանակին ստացված» հարցումների պատասխանները կազմել են 60%, և այդ ամենը հաշվի առնելով՝ կարող ենք պնդել, որ Պաշտպանության Նախարարությունը ակնառու կերպով աչքի է ընկնում իր անպարտաճանաչությամբ:

2015

- ժամանակին-18
- ուշացված-12
- չպատասխանված-0

2016

- ժամանակին-5
- ուշացված-24
- չպատասխանված-0

ՊՆ-ի հարցումների պատասխանները



ՊԱՏԿԵՐ 4

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՀՀ ոստիկանություն և նրա ստորաբաժանումներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ. ուղարկված 216 տեղեկատվության հարցումներից 18-ը (8.3%) ուղղված են եղել ՀՀ ոստիկանությանը և նրա ստորաբաժանումներին. (2015 թ. այն կազմել է 11.2%՝ 294 տեղեկատվական հարցումներց 33- ը) 2016 թ. ՀՀ Ոստիկանության և նրա ստորաբաժանումների կողմից «ժամանակին ստացված» հարցումների պատասխանները կազմել են 88. 9 %, իսկ 2015 թ. «ժամանակին են ստացվել» ուղարկված հարցումների 91%-ը: Ժամանակին են ստացվել 18 հարցումներից՝ 16-ի, և ուշացված՝ 2-ի պատասխանները: ՀՀ ուստիկանությունը պատասխանել է իրեն ուղարկված բոլոր տեղեկատվական հարցումներին:

2015

- ժամանակին-30
- ուշացված-3
- չպատասխանված-0

2016

- ժամանակին-16
- ուշացված-2
- չպատասխանված-0

Ոստիկանությանն ու նրա ստորաբաժանումների հարցումների պատասխանները



ՊԱՏԿԵՐ 5

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ. ուղարկված 216 տեղեկատվական հարցումներից 18-ը (8,3%) ուղղված են եղել տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին: 2015 թ. ուղարկված վերոհիշյալ կառույցներ ուղարկվել են 294 տեղեկատվության հարցումներից 52-ը (17.6%): 2016թ. տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ժամանակին են ստացվել 18 հարցումներից 18-ի պատասխանները, ուշացված կամ անպատասխան հարցումներ չկան: Այսպիսով, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները 2016 թ. պատշաճ կերպով պահպանել են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետները:

2015

- ժամանակին-46
- ուշացված-6
- չպատասխանված-0

2016

- ժամանակին-18
- ուշացված-0
- չպատասխանված-0

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հարցումների պատասխանները



ՊԱՏԿԵՐ 6

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՀՀ Քննչական Կոմիտե և նրա ստորաբաժանումներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ. ուղարկված 216 հարցումներից 13-ը (6%) ուղարկվել են ՀՀ Քննչական Կոմիտե: «Ժամանակին» են ստացվել 9 (69%), ուշացրած 3 հարցման պատասխան: Չպատասխանված է մնացել 1 գրություն:

ՀՀ Քննչական Կոմիտեի հարցումների պատասխանները



ՊԱՏԿԵՐ 7

ՀՀ Դատախազություն և ստորաբաժանումներ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ.ՀՀ դատախազություն և ստորաբաժանումներ ուղարկվել են 216 տեղեկատվական հարցումներից 10-ը (4.6%), ժամանակին են ստացվել 3, ուշացված՝ 4 հարցումների պատասխաններ, 3 հարցումներ մնացել են չպատասխանված: 2015 թ. ուղարկված 294 տեղեկատվության հարցումներից 14 (4.7%) են ուղղված եղել ՀՀ Դատախազությանը և նրա ստորաբաժանումներին, ժամանակին ստացված 9 և ուշացված 3 պատասխաններով:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

2015	2016
• ժամանակին-9	• ժամանակին-3
• ուշացված-3	• ուշացված-4
• չպատասխանված-2	• չպատասխանված-3

Դատախազության հարցումների պատասխանները



ՊԱՏԿԵՐ 8

ՀՀ ֆինանսների նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ. ուղարկված 216 տեղեկատվական հարցումներից 6-ը՝ 2.8% հասցեագրվել են ՀՀ ֆինանսների նախարարությանը. (2015 թ. այն կազմել է 294 տեղեկատվական հարցումներից 3-ը՝ 1.02%): 6 հարցումներից 3-ի պատասխանները ստացվել են ժամանակին, 3-ինը՝ ուշացված: 2015 թ. ֆինանսների նախարարություն են ուղարկվել 294 հարցումներից 3-ը, որոնցից 2-ին պտասխանվել է ժամանակին, 1-ին՝ ուշացված:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

2015	2016
• ժամանակին-2	• ժամանակին-3
• ուշացված-1	• ուշացված-3
• չպատասխանված-0	• չպատասխանված-0

ՀՀ Հատուկ քննչական ծառայություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ. ուղարկված 216 հարցումներից 4-ը (1.85%) ուղղված են եղել ՀՀ Հատուկ քննչական ծառայությանը: Ժամանակին են ստացվել ուղարկված բոլոր 4 հարցումների պատասխանները: 2015թ. Հատուկ քննչական ծառայություն ուղարկվել են 19 հարցումներ (6.46%), որոնց բոլորի պատասխանները ևս ստացվել են ժամանակին:

2015	2016
• ժամանակին-19	• ժամանակին-4
• ուշացված-0	• ուշացված-0
• չպատասխանված-0	• չպատասխանված-0

ՀՀ Հատուկ քննչական ծառայության հարցումների պատասխանները



ՊԱՏԿԵՐ 9

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ. ուղարկված 216 տեղեկատվության հարցումներից 4-ը (1.85%) ուղղված են եղել են ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, (2015 թ. այն կազմել է 1.7%-ը՝ 294 տեղեկատվական հարցումներից 5-ը): Եթե արտաքին գործերի նախարարությունը 2015 թ ուղարկված բոլոր հարցումներին պատասխանել է ժամանակին, ապա 2016 թ. 4 հարցումներից միայն մեկին է պատասխանել ժամանակին (25%), 2-ինը՝ ուշացած, և մեկ հարցմանը համար ընդհանրապես պատասխան չի ուղարկել:

2015

- ժամանակին-5
- ուշացված-0
- չպատասխանված-0

2016

- ժամանակին-1
- ուշացված-2
- չպատասխանված-1

ՀՀ քաղաքաշինության նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ. քաղաքաշինության նախարարությանը ուղարկվել են 216 տեղեկատվական հարցումներից 4-ը՝ 1,85%: Ժամանակին են ստացվել 2-ի (50%-ը), ուշացած՝ 2-ի պատասխանները: Չպատասխանված տեղեկատվական հարցումներ չկան: 2015թ. ուղարկված 294 տեղեկատվության հարցումներից 3-ն (1.02%) են ուղղված եղել ՀՀ քաղաքաշինության նախարարությանը: Դրանցից 2-ի պատասխանները ստացվել են ժամանակին, 1-ինը՝ ուշացված: Այսպիսով, թե 2015, թե 2016 թթ-ին ՀՀ քաղաքաշինութան նախարարությունը պատշաճ չի պահպանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետները:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

2015	2016
• ժամանակին-2 • ուշացված-1 • չպատասխանված-0	• ժամանակին-2 • ուշացված-2 • չպատասխանված-0

ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016թ. ուղարկված 216 տեղեկատվության հարցումներից ընդամենը 2-ն (0.9%) են ուղղված եղել ՀՀ կրթության և գիտության նախարարությանը: Համեմատելու համար ասենք, որ 2015 թվականին կրթության և գիտության նախարարություն ուղարկվել են տեղեկատվական 294 հարցումներից 10-ը (մոտ 3%): 2016 թ. ժամանակին են եկել 1, ուշացված՝ 1 հարցման պատասխան:

2015	2016
• ժամանակին-10 • ուշացված-0 • չպատասխանված-0	• ժամանակին-1 • ուշացված-1 • չպատասխանված-0

ՀՀ մշակույթի և սպորտի նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ. մշակույթի և սպորտի նախարարություն են ուղարկվել 216 տեղեկատվական հարցումներից 3-ը (1,4%-ը), որոնց բոլորի պատասխաններն էլ ստացվել են ուշացված: 2015 թ. ուղարկված 294 տեղեկատվության հարցումներից 4-ն են ուղղված եղել ՀՀ մշակույթի և սպորտի նախարարությանը, և բոլոր հարցումներին պատասխանները ստացվել են ժամանակին: Ի տարբերություն 2015 թ.-ի՝ 2016-ին մշակույթի և սպորտի նախարարությունը բնավ չի պահպանել

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետները:

2015

- ժամանակին-4
- ուշացված-0
- չպատասխանված-0

2016

- ժամանակին-0
- ուշացված-3
- չպատասխանված-0

ՀՀ տարածքային կառավարման նախարարություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թ. ուղարկված 216 տեղեկատվության հարցումներից 3-ը (1.4%-ը) ուղղված են եղել ՀՀ Տարածքային կառավարման նախարարությանը, և բոլոր 3-ի պատասխաններն էլ ստացվել են ուշացված: (2015 թ. այն կազմել է 294 տեղեկատվական հարցումներից 8-ը՝ 2.72%, 2 ուշացված և 6 ժամանակին ստացված պատասխանով): Այստեղ նույնպես կարող ենք ասել, որ ոչ 2015, ոչ էլ 2016 թվականներին ՀՀ Տարածքային կառավարման նախարարությունը պատշաճ չի պահպանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետները:

2015

- ժամանակին-6
- ուշացված-2
- չպատասխանված-0

2016

- ժամանակին-0
- ուշացված-3
- չպատասխանված-0

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ՀՀ Բնապահպանության նախարարություն
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

2016թ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից. մեկական հարցում է ուղարկվել ՀՀ Գյուղատնտեսության նախարարությանը, ՀՀ Բնապահպանության նախարարությանը, և ՀՀ Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը: 3 նախարարությունների կողմից էլ պատասխանները ստացվել են ժամանակին:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2016 թվականին ուղարկված 216 տեղեկատվության հարցումներից 29ը ուղարկվել են տարբեր կառույցների, մասնավորապես.

- **ՀՀ Զինվորական Կոմիսարիատներ** ուղարկվել են 2 տեղեկատվական հարցումներ, ուշացած են եկել 2-ի պատասխանները:
- **Ազգային Անվտանգության Ծառայություն** ուղարկվել են 4 տեղեկատվական հարցումներ, ժամանակին են ստացվել 1, ուշացված՝ 3 պատասխան:
- **ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով** ուղարկվել են 3 տեղեկատվական հարցումներ, ժամանակին են ստացվել բոլոր 3-ի պատասխանները:
- **ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե** ուղարկվել է 2 տեղեկատվական հարցում, որինցից մեկի պատասխանը ստացվել է ժամանակին, մեկի պատասխանը՝ ուշացած:
- **ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն** ուղարկված 2 տեղեկատվական հարցումների համար ստացել ենք 1 «ժամանակին» և 1 ուշացրած պատասխան:
- **ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած:
- **ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին:
- **ՀՀ ազգային արխիվ** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին:
- **ՀՀ մտավոր սեփականության գործակալություն** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին:
- **ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին:

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

- **ՀՀ կառավարության աշխատակազմ** ուղարկվել է 2 հարցում, որոնց պատասխանները ստացվել են ուշացած:
- **ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած:
- **Երևան Ջուր ՓԲԸ** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին:
- **"Հայաստանի Էլեկտրական Ցանցեր" ՓԲԸ** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած:
- **"Երևան Գազ" ՊՓԲԸ** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած:
- **ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին:
- **ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբ** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին:
- **ՀՀ փաստաբանական դպրոց** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ուշացած:
- **Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջան** ուղարկվել է 1 հարցում, որի պատասխանը ստացվել է ժամանակին:

Ամփոփում

Ամփոփելով 2016թ. պետական կառույցների, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեղեկատվական հարցումներին տրված պատասխանները ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետների, արձանագրում ենք, որ սահմանված ժամկետները պահպանել են հետևյալ պետական մարմինները.

- **Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ,**
- **ՀՀ Հատուկ քննչական ծառայություն**
- **ՀՀ գյուղատնտեսության նախարարություն**
- **ՀՀ Բնապահպանության նախարարություն**
- **ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Համեմատելու համար ներկայացնենք 2015 թ. ուղարկված տեղեկատվական հարցումներին «ժամանակին» պատասխանած պետական մարմինների ցուցակը.

- **ՀՀ նախագահի աշխատակազմ**
- **ՀՀ հատուկ քննչական ծառայություն**
- **ՀՀ ազգային անվտանգության ծառայություն**
- **ՀՀ կրթության և գիտության նախարարություն**
- **ՀՀ արտաքին գործերի նախարարություն**
- **ՀՀ բնապահպանության նախարարություն**
- **ՀՀ մշակույթի և սպորտի նախարարություն**
- **ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն**
- **Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ**

Ինչպես տեսնում ենք, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ մշակույթի և սպորտի նախարարությունը և Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը 2015 թ. աչքի են ընկել ավելի մեծ ճշտապահությամբ, քան 2016թ: Վերոհիշյալ ցուցակներից կարելի է նաև նկատել, որ Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք 2015 թ. «Ժամանակին» էին պատասխանել 52 հարցումներից 46-ին, 2016 թ. պահպանել են «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի պահանջները և «ժամանակին» են պատասխանել ուղարկված բոլոր տեղեկատվական հարցումներին:

Այն պետական կառույցների ցանկը, որոնք 2016թ. ունեն ավելի մեծ թվով «ժամանակին» պատասխան տված հարցումներ.

- **ՀՀ ոստիկանություն և նրա ստորաբաժանումներ** (ժամանակին են ստացվել 18 հարցումներից 16 պատասխանները)
- **Սոցիալական և առողջապահական բնագավառ** (ժամանակին են ստացվել 38 հարցումներից 31 պատասխանները)
- **Արդարադատության բնագավառ** (ժամանակին են ստացվել 33 հարցումներից 24 պատասխանները)

Այստեղ ևս ներկայացնենք 2015 թ. ավելի մեծ թվով «ժամանակին» պատասխան տված պետական կառույցների ցուցակը.

- **ՀՀ Ոստիկանություն և նրա ստորաբաժանումները**

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

- **Տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները**
- **Սոցիալական և առողջապահական բնագավառ**
- **ՀՀ դատախազությունը և նրա ստորաբաժանումները**

Ինչպես տեսնում ենք, ՀՀ ոստիկանությունը, ինչպես նաև Սոցիալական և առողջապահական բնագավառի մարմինները թե 2015թ, և թե 2016-ին գլխավորապես պահպանել են «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված ժամկետները: Նաև նշենք, որ ՀՀ Դատախազությունը 2015 թ. համեմատ 2016 թ. ավելի վատ է պատասխանել իրեն ուղարկված հարցումներին, ժամանակին պատասխանելով ուղարկված 10 հարցումներից ընդամենը 3-ին:

2016թ. ավելի մեծ թվով «ուշացած» պատասխաններ են տվել հետևյալ կառույցները.

- **ՀՀ պաշտպանության նախարարությունը** (ուշացված են ստացվել 29 հարցումներից 24-ի պատասխանները)
- **ՀՀ արտաքին գործերի նախարարություն** (ուշացված են ստացվել 4 հարցումներից 2-ի պատասխանը, ժամանակին՝ 1-ի պատասխանը, նապատասխան է մնացել 1 տեղեկատվական հարցում)
- **ՀՀ դատախազություն** (ժամանակին են ստացվել 3, ուշացված՝ 4 հարցման պատասխանները, չպատասխանված է մնացել 3 հարցում):

2015թ. ավելի մեծ թվով «ուշացած» պատասխաններ են տվել հետևյալ կառուցները.

- **ՀՀ պաշտպանության նախարարությունը**
- **Արդարադատության բնագավառը**
- **ՀՀ դատախազություն և նրա ստորաբաժանումները**

Ինչպես տեսնում ենք, ՀՀ պաշտպանության նախարարությունը և ՀՀ դատախազությունը թե 2015թ, թե 2016-ին իրենց ուղարկված տեղեկատվական հարցումներին ամենաշատ ուշացած պատասխան ուղարկած կառույցներն են:

Ընդհանուր առմամբ 2016 թ. ուղարկված 216 տեղեկատվական հարցումներից «ժամանակին» են ստացվել 135 հարցման պատասխան(62.5%), ուշացած՝ 75 հարցման պատասխան (34.7%), և 6 հարցման պատասխան չի ստացվել (2.8%):

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

Համեմատելու համար նշենք, որ 2015 թ. ուղարկված տեղեկատվական 294 հարցումներից 237-ի պատասխանները ստացել ենք «ժամանակին», 53-ի պատասխանը՝ ուշացած, և 4 հացման պատասխան չի ստացվել: Ստորև ներկայացնում ենք 2015 և 2016 թթ. ուղարկված տեղեկատվական հարցումների և դրանց պատասխանների սխեման:



Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՀԱՎԵԼՎԱԾ 1

	ՀԱՍՑԵԱՏԵՐ	ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ		ԺԱՄԱՆԱԿԻՆ		ՈՒՇԱՑՐԱԾ		ՉՊԱՏԱՍԽԱՆՎԱԾ	
	ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
1		2015	2016	2015	2016	2015	2016	2015	2016
2	ՀՀ Արդարադատության նախարարություն	12	12	5	7	6	4	1	1
3	ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչություն	6	5	6	5	0	0	0	0
4	ՀՀ դատական դեպարտամենտ	8	4	3	2	5	2	0	0
5	ՀՀ արդարադատության ակադեմիա	1	2	0	1	1	1	0	0
6	ՀՀ գլխավոր հարկադիր կատարող	0	1	0	0	0	0	0	1
7	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդական խումբ	0	1	0	1	0	0	0	0
8	ՀՀ վճռաբեկ դատարան	2	0	1	0	1	0	0	0
9	ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ	4	8	3	8	1	0	0	0
	ԸՆԴ.	**33**	**33**	**18**	**24**	**14**	**7**	**1**	**2**

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՀԱՎԵԼՎԱԾ 2

	ՀԱՍՑԵԱՏԵՐ	ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ		ԺԱՄԱՆԱԿԻՆ		ՈՒՇԱՑՐԱԾ		ՉՊԱՏԱՍԽԱՆՎԱԾ	
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՐԱ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ									
		2015	2016	2015	2016	2015	2016	2015	2016
10	ՀՀ ոստիկանություն	27	8	25	7	2	1	0	0
11	ՀՀ ճանապարհային ոստիկանություն	2	1	1	1	1	0	0	0
12	ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն	1	0	1	0	0	0	0	0
13	ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Բազումի բաժին	0	1	0	1	0	0	0	0
14	ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի ոստիկանության Տարոնի բաժին	0	1	0	1	0	0	0	0
15	ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչություն	1	1	1	1	0	0	0	0
16	ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Թումանյան բաժին	0	1	0	1	0	0	0	0
17	ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժին	0	1	0	1	0	0	0	0
18	ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Սպիտակի բաժին	0	1	0	1	0	0	0	0
19	ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Տաշիրի բաժին	0	1	0	1	0	0	0	0
20	ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Ստեփանավանի բաժին	0	1	0	1	0	0	0	0
21	ՀՀ ճանապարհային ոստիկանության 2-րդ սպայական զումարտակի 5-րդ վաշտ	0	1	0	1	0	0	0	0

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

22	ՀՀ ոստիկանության կրթահամալիր	1	0	1	0	0	0	0	0
23	ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն	1	0	1	0	0	0	0	0
	ԸՆԴ.	**33**	**18**	**30**	**16**	**3**	**2**	**0**	**0**

ՀԱՎԵԼՎԱԾ 3

	ՀԱՍՑԵԱՏԵՐ	ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ		ԺԱՄԱՆԱԿԻՆ		ՈՒՇԱՑՐԱԾ		ՉՊԱՏԱՍԽԱՆՎԱԾ	
	ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ								
		2015	**2016**	**2015**	**2016**	**2015**	**2016**	**2015**	**2016**
24	Երևանի քաղաքապետարան	8	5	8	5	0	0	0	0
25	Վանաձորի քաղաքապետարան	3	6	3	6	0	0	0	0
26	Ստեփանավանի քաղաքապետարան	1	1	1	1	0	0	0	0
27	Սպիտակի քաղաքապետարան	1	1	1	1	0	0	0	0
28	Ալավերդու քաղաքապետարան	1	1	1	1	0	0	0	0
29	Գյումրու քաղաքապետարան	0	2	0	2	0	0	0	0
30	Լոռու մարզպետարան	4	1	4	1	0	0	0	0
31	Շիրակի մարզպետարան	4	1	2	1	2	0	0	0
32	Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման այլ մարմիններ	30	0	26	0	4	0	0	0
	ԸՆԴ.	**52**	**18**	**46**	**18**	**6**	**0**	**0**	**0**

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՀԱՎԵԼՎԱԾ 4

	ՀԱՍՑԵԱՏԵՐ	ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ		ԺԱՄԱՆԱԿԻՆ		ՈՒՇԱՑՐԱԾ		ՉՊԱՏԱՍԽԱՆՎԱԾ	
	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ								
		2015	2016	2015	2016	2015	2016	2015	2016
33	ՀՀ առողջապահության նախարարություն	15	12	12	8	3	4	0	0
34	ՀՀ ԱՆ Ավան հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ	1	1	1	1	0	0	0	0
35	ՀՀ ԱՆ Նուբարաշեն հոգեբուժական կենտրոն ՓԲԸ	1	2	1	2	0	0	0	0
36	ՀՀ ԱՆ Նորք Հոգեբուժական կենտրոն ՓԲԸ	0	1	0	0	0	1	0	0
37	Սևանի հոգեբուժական հիվանդանոց	2	1	2	1	0	0	0	0
38	Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր	2	3	1	3	1	0	0	0
39	Գյումրու հոգեկան առողջության կենտրոն	2	3	1	3	1	0	0	0
40	Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի առողջության կենտրոն	1	1	1	1	0	0	0	0
41	Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր	2	3	1	3	1	0	0	0
42	ՀՀ ԱՆ Նևրոզների կլինիկա ՓԲԸ	1	1	0	0	1	1	0	0
43	ՀՀ ԱՆ Նարկոլոգիական հանրապետական կենտրոն	3	2	2	2	1	0	0	0
44	Արաբկիր բժշկական համալիրի երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ	0	1	0	1	0	0	0	0
45	ՀՀ ԱՆ աշխատակազմի առողջապահական պետական տեսչություն	1	0	1	0	0	0	0	0

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

46	Վարդենիսի նյարդահոգեբանական տուն ինտերնատ	1	0	0	0	0	0	1	0
47	Նորքի տուն ինտերնատ	1	0	1	0	0	0	0	0
48	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	10	4	10	4	0	0	0	0
49	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Վանաձորի սոցիալական ապահովության տարածքային բաժին	0	1	0	1	0	0	0	0
50	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՀՀ բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն	0	1	0	0	0	1	0	0
51	ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն	0	1	0	1	0	0	0	0
	ԸՆԴ.	**43**	**38**	**34**	**31**	**8**	**7**	**1**	**0**

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

ՀԱՎԵԼՎԱԾ 5

	ՀԱՍՑԵԱՏԵՐ	ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ		ԺԱՄԱՆԱԿԻՆ		ՈՒՇԱՑՐԱԾ		ՉՊԱՏԱՍԽԱՆՎԱԾ	
ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ									
		2015	2016	2015	2016	2015	2016	2015	2016
52	ՀՀ պաշտպանության նախարարություն	30	29	18	5	12	24	0	0
ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ և ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ									
53	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	10	2	10	1	0	1	0	0
ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ									
54	ՀՀ արտաքին գործերի նախարարություն	5	4	5	1	0	2	0	1
ՀՀ ԲԱՆՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ									
55	ՀՀ բանպահպանության նախարարություն	5	1	5	1	0	0	0	0
ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ									
56	ՀՀ մշակույթի և սպորտի նախարարություն	4	3	4	0	0	3	0	0
ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ									
57	ՀՀ քաղաքաշինության նախարարություն	3	4	2	2	1	2	0	0
ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ									
58	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	8	3	6	0	2	3	0	0
ՀՀ ՖԻՆԱՆՍԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ									
59	ՀՀ ֆինանսերի նախարարություն	3	6	2	3	1	3	0	0
ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ									
60	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	1	1	1	1	0	0	0	0

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

	ՀԱՍՑԵԱՏԵՐ	ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ		ԺԱՄԱՆԱԿԻՆ		ՈՒՇԱՑՐԱԾ		ՉՊԱՏԱՍԽԱՆՎԱԾ	
		2015	2016	2015	2016	2015	2016	2015	2016
ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ									
61	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	0	1	0	1	0	0	0	0
ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ և ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ									
62	ՀՀ գլխավոր դատախազություն	11	9	6	4	3	3	2	2
63	ՀՀ զինվորական դատախազություն	1	1	1	0	0	1	0	0
64	Լոռու մարզի դատախազություն	2	0	2	0	0	0	0	0
	ԸՆԴ.	**14**	**10**	**9**	**4**	**3**	**4**	**2**	**2**
ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ									
65	ՀՀ հատուկ քննչական ծառայություն	2	4	2	4	0	0	0	0
66	ՀՀ քննչական կոմիտե	12	7	12	3	0	3	0	1
67	ՀՀ քննչական կոմիտեի Շիրակի մարզի քննչական վարչություն	0	2	0	2	0	0	0	0
68	ՀՀ քննչական կոմիտեի լոռու մարզային քննչական վարչություն	1	1	1	1	0	0	0	0
69	ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչություն	0	1	0	1	0	0	0	0
70	ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչություն	2	0	2	0	0	0	0	0
71	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության վեցերորդ կայազորային քննչական բաժին	1	0	1	0	0	0	0	0
72	ՀՀ Երևան քաղաքի քննչական կոմիտեի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժին	0	1	0	1	0	0	0	0

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

73	ՀՀ Երևան քաղաքի քննչական կոմիտեի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին	0	1	0	1	0	0	0	0
74	ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն	1	0	1	0	0	0	0	0
	ԸՆԴ.	**19**	**17**	**19**	**13**	**0**	**3**	**0**	**0**
				ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ					
		2015	**2016**	**2015**	**2016**	**2015**	**2016**	**2015**	**2016**
75	Զինվորական Կոմիսարիատներ	1	2	1	2	0	0	0	0
76	Ազգային Անվտանգության Ծառայություն	7	4	6	1	1	3	0	0
77	ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	3	3	0	3	3	0	0	0
78	ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե	1	2	1	1	0	1	0	0
79	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	0	2	0	1	0	1	0	0
80	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ	3	1	3	0	1	1	0	0
81	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն	0	1	0	1	0	0	0	0
82	ՀՀ ազգային արխիվ	0	1	0	1	0	0	0	0
83	ՀՀ մտավոր սեփականության գործակալություն	0	1	0	1	0	0	0	0
84	ՀՀ ազգային անվտանգության խորհրդի աշխատակազմ	4	1	4	1	0	0	0	0
85	ՀՀ կառավարության աշխատակազմ	1	2	0	0	0	2	1	0
86	ՀՀ հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով	1	1	1	0	0	1	0	0

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am

87	Երևան Ջուր ՓԲԸ	0	1	0	1	0	0	0	0
88	"Հայաստանի Էլեկտրական Ցանցեր" ՓԲԸ	0	1	0	0	0	1	0	0
89	"Երևան Գազ" ՊՓԲԸ	0	1	0	0	0	1	0	0
90	ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե	0	1	0	1	0	0	0	0
91	ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խումբ	0	1	0	1	0	0	0	0
92	ՀՀ փաստաբանական դպրոց	2	1	1	0	1	1	0	0
93	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջան	0	1	0	1	0	0	0	0

Տիգրան Մեծի 59, Վանաձոր, 2001, Հայաստանի Հանրապետություն, հեռ. (+374 322) 4 22 68; Էլ. փոստ՝ hcav@hcav.am
59 Tigran Mets St., Vanadzor, 2001, Republic of Armenia, Tel. (+374 322) 4 22 68; E-mail: hcav@hcav.am